ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄՈԴԵԼԸ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**Հիմնաբառեր.** *զարգացման պետություն, տնտեսական զարգացում, շուկայական մեխանիզմներ, տնտեսական հայրենասիրություն:*

*Զուտ շուկայական մեխանիզմները, փոքր բացառություններով, չեն հանգեցրել տնտեսության նոր, արագ աճող հատվածների ստեղծմանը, բարձրտեխնոլոգիական արտադրությունների ընդլայնմանը: Ինչպես որ զարգացող բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում դեռևս չի լուծվել տնտեսական առաջընթացի հիմնախնդիրը: Հետևաբար՝ երկրում կուտակված սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրների լուծման բանալին անցումն է զարգացման պետության մոդելին:*

Նոր տնտեսակարգին անցման և շուկայական մեխանիզմների ձևավորման ավելի քան քսանամյա ժամանակաշրջանում Հայաստանը և խորհրդային մյուս երկրները, ըստ Վաշինգտոնյան կոնսենսուսի, իրականացրին մի շարք միջոցառումներ (մասնավորեցում, տնտեսության ապակարգավորում և այլն): Մասնավորեցվեցին պետական ձեռնարկությունները, և ձևավորվեց տնտեսության մասնավոր հատվածը, ազատականացվեց միջազգային տնտեսական գործունեությունը և այլն: Դրական տեղաշարժերի հետ միասին, հատկապես՝ Հայաստանի և մի քանի այլ երկրների պարագայում, տեղի ունեցավ ապաարդյունաբերականացում և ագրարայնացում, փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը, առաջացավ աղքատ բնակչության մի հոծ զանգված: Զուտ շուկայական մեխանիզմները («շուկայի անտեսանելի ձեռքը»), փոքր բացառություններով, չհանգեցրին տնտեսության նոր, արագ աճող հատվածների ստեղծմանը, բարձրտեխնոլոգիական արտադրությունների ընդլայնմանը: Ինչպես որ բազմաթիվ զարգացող երկրներում, այնպես էլ Հայաստանում չլուծվեց ու առայսօր չի լուծվում տնտեսական առաջընթացի հիմնախնդիրը: Ակնհայտ է, որ տնտեսության ու հասարակության՝ ներկայումս ձևավորված կառուցվածքով և գործող մեխանիզմներով դժվար կլինի բարելավել սոցիալ-տնտեսական վիճակը: Նման դրության մեջ հայտնվել են բազմաթիվ զարգացող երկրներ, և կուտակված խնդիրները հիմնականում լուծվել են զարգացման պետության ձևավորման ճանապարհով:

«Զարգացման պետություն» կամ «կոշտ պետություն» հասկացությունը կիրառության մեջ են դրել միջազգային քաղաքատնտեսության մասնագետները՝ XX դարի վերջին Արևելյան Ասիայի որոշ երկրներում պետական մակրոտնտեսական պլանավորման երևույթը նկարագրելու համար: Կապիտալիզմի այս մոդելում պետությունը (երբեմն անվանվում է կապիտալիստական զարգացման պետություն) ունի ոչ միայն ավելի անկախ կամ ինքնավար քաղաքական իշխանություն, այլև տնտեսության վերահսկողության առա-

վել բարձր աստիճան: Հասկացությունը հետագայում օգտագործվել է Արևելյան Ասիայի սահմաններից դուրս գտնվող այն երկրների բնութագրման նպատակով, որոնք բավարարում էին զարգացման պետության չափանիշները: Զարգացման պետությունը երբեմն հակադրվում է «գիշատչային» կամ «թույլ» պետությանը:

Ըստ Չալմերս Ջոնսոնի՝ «կապիտալիստական զարգացման պետություն» գաղափարը ժամանակակից Ճապոնիայի արդյունաբերական քաղաքականություն ներմուծելու նպատակներից մեկն էլ ամերիկյան և խորհրդային տնտեսությունների հակադրության սահմաններից դուրս գալն էր[1]: Այդպիսով՝ հնարավորություն է ստեղծվել դիտարկելու, մի կողմից՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, իսկ մյուս կողմից՝ Ճապոնիայի ու դրան նմանակող պետությունների տնտեսությունների տարբերությունները:

Ռոլանդ Դորը, հետահայաց անդրադառնալով 1970-ական թթ., նկատել է, որ «նրանք (ճապոնացիները) չէին հավատում «անտեսանելի ձեռքին»: Այնուհետև Դորը հարց է հնչեցրել, թե այդ դեպքում ինչո՞ւ պետք է երկրագնդի վրա լինի Ճապոնիան, որն անթաքույց հպարտանում է իր կոշտ տնտեսական քաղաքականությամբ, ՏՀԶԿ երկրների շարքում առավել հաջողակներից է, դինամիկորեն հարմարվում է այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են նավթի գների կլանումը, գնաճի՝ ցածր մակարդակում վերահսկումը և արդյունաբերության կառուցվածքում ծանրության կենտրոնն անկումայինից դեպի մրցունակ ճյուղեր տեղափոխումը[2]:

Ճապոնիան, խախտելով կապիտալիստական ռացիոնալության բոլոր ընդունված սկզբունքները, դարձել է աշխարհի հարուստ երկրներից մեկը և մոդել Արևելյան Ասիայի երկրների, ներառյալ՝ Չինաստանի համար[3]:

Մանուել Կաստելսը զարգացման պետությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Պետությունը զարգացման է, եթե որպես լեգիտիմ սկզբունք է սահմանվել զարգացման առաջմղումն ու աջակցումը»: Միաժամանակ, նա նշում է, որ զարգացում ասելով պետք է հասկանալ տնտեսական աճի և կառուցվածքային փոփոխությունների կայուն բարձր տեմպերի համակցություն ինչպես ազգային տնտեսության մեջ, այնպես էլ միջազգային տնտեսության հետ ունեցած հարաբերություններում[4]:

Զարգացման է այն պետությունը, որտեղ կառավարությունն ակտիվ կերպով մասնակցում է մակրո- և միկրոտնտեսական պլանավորմանը՝ հանուն տնտեսության առաջխաղացման[5]:

Կարծիքներ են շրջանառվում, որ զարգացման պետություններն ունակ են ավելի արագորեն առաջ մղելու իրենց տնտեսությունները, քան կարգավորվողները: Այսպես,

---

[1] Meredith Woo-Cummings, The Development State. NY: Cornell University Press, 1999, p. 32.

[2] Roland Dore, Flexible Rigidities: Industrial Policy and Structural Adjustment in the Japanes Economy, 1970–1980 (Stanford University Press, 1986), pp. 1, 6.

[3] Roland Dore, Flexible Rigidities: Industrial Policy and Structural Adjustment in the Japanes Economy, 1970–1980 (Stanford University Press, 1986), p. 18.

[4] Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура/Мануэль Кастельс: пер. с англ., под науч. ред. О.И. Шкаратина: Гос. Ун-т «Высш. шк. экономики». 2000, с. 183.

[5] Onis ZThe Logic of the Developmental State. Comparative Politics. 24. no.1.. 1991, pp. 109–26.

օրինակ, ԱՄՆ-ի տնտեսությունը կրկնապատկելու համար պահանջվեց մոտավորապես 50 տարի, մինչդեռ Չինաստանին, որ զարգացման պետություն է, այդ նույն 50 տարում (1960–2010 թթ.) հաջողվեց տնտեսությունը մեծացնել 3.4 անգամ[1]: Հետևաբար՝ տրամաբանական է, որ երկիրն իր սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրները լուծելու համար պետք է դառնա զարգացող պետություն:

Տնտեսական զարգացմանն անհրաժեշտ ներուժը ենթադրում է ամուր ինստիտուցիոնալ հիմք: Այդ առումով, ինչպես համապատասխան ինստիտուտները, այնպես էլ ֆորմալ (ձևական) կամ ոչ ֆորմալ (ոչ ձևական) վարքագիծն ընդլայնում են հասարակության կայուն տնտեսական զարգացման միտումների վերլուծության հնարավորությունները: Ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման գործում հատուկ դեր ունի պետությունը: Շուկայական մեխանիզմները կամ Ադամ Սմիթի «շուկայի անտեսանելի ձեռքն» ունակ չեն վերարտադրելու ֆորմալ նորմերը: Դա բուն պետության գործառույթն է: Ինստիտուցիոնալ միջավայրին բնորոշ են ոչ միատարրությունը և ներքին լարվածությունը: Այդպիսով՝ պետական ֆորմալ ինստիտուտների ստեղծումն ու փոփոխությունը պետք է կողմնորոշված լինեն տնտեսական վարքագծի ոչ ֆորմալ նորմերի համապատասխան արձագանքին՝ իրականացվելով դրանց հետ փոխկապակցված:

Ըստ Մաքս Վեբերի՝ կայուն քաղաքականության հիմնական նախադրյալներն են ազդեցիկ խորհրդարանը և պատասխանատու քաղաքական կուսակցությունները: Ժողովրդավարության իռացիոնալությունը, պետական-քաղաքական տեսանկյունից, Վեբերը տեսնում է զանգվածների անկազմակերպվածության, քաղաքականությունում հուզական տարրերի գերակայության մեջ[2]:

Տնտեսական զարգացումն արտադրողականության և աշխատավարձերի բարձրացման պատմական գործընթաց է՝ պայմանավորված բնակչության մեկ շնչի հաշվով ավելի մեծ ավելացված արժեքով գործունեությամբ՝ շնորհիվ ավելի բարձր որակավորմամբ աշխատուժի օգտագործման: Ընդ որում, այդ գործընթացը համախմբում է հասարակության տարբեր դասերի ներկայացուցիչների, այդ թվում՝ ներդրումների և նորամուծությունների համար պատասխանատու քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների և ձեռնարկատերերի: Հենց այս համատեքստում, զարգացման պետությունը պատմականորեն դիտարկվել է և պետք է շարունակի դիտարկվել որպես դեպի առաջընթացը կողմնորոշված կենտրոնական ինստիտուտ:

Զարգացման պետության հայեցակարգի ըմբռնման համար կարևորվում է դրա որոշ բնութագրիչների[3] առանձնացումը: Այսպես՝ նման պետության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում տեխնիկական կրթությանը, մասնավորապես՝ հաշվարկներ կատարելու և համակարգչային գիտելիքների ու հմտությունների ամրապնդմանը: Տեխնիկական կողմ-

---

[1] https://tradingeconomics.com/china/gdp

[2] Вебер М., Парламент и правительство в новой Германии (май 1918) // Политические работы. М.: Праксис, 2003, с. 243.

[3] Thompson M., Late industrialisers, late democratisers: developmental states in the Asia-Pacific. *Third World Quarterly*. 1996.17(4): 625-647.Thompson, 1996, Woo-Cumings, 1999.

նորոշմամբ կրթությանը տալով ռազմավարական նշանակություն՝ համապատասխան ներուժն օգտագործվում է պետական կառույցներում՝ բյուրոկրատիայի կարողունակության ամրապնդման նպատակով:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն զարգացման պետության տարբեր մոդելներ, որոնցում, սակայն, հնարավոր է առանձնացնել որոշակի ընդհանուր կողմեր:

Առաջին՝ տնտեսական հայրենասիրություն. առանց արժեքային այս գործոնի մասնակցության անհնարին է պատկերացնել զարգացման պետության ստեղծումը: Երկրորդ՝ տնտեսական աճ, ինչը փոխում է երկրի կյանքը՝ շուկայում և տնտեսությունում պետության միջամտության, վերջինիս դերի ակտիվացման շնորհիվ: Դա ենթադրում է հզոր արդյունաբերական տնտեսության խթանման պետական քաղաքականություն, մասնավորապես՝

- արդյունաբերական հովանավորչություն,
- արդյունաբերության նոր տեսակների ներդրում,
- նորաստեղծական ձեռնարկատիրության պաշտպանություն և աջակցություն ձևավորման փուլում,
- օժանդակություն տեխնոլոգիական ունակությունների և վերազինման արտահայտված միտումներով առանձնացող ճյուղերին,
- ենթակառուցվածքների ստեղծման նպատակով ծախսեր, որոնք գրավում են ներդրողներին:

Զարգացման պետության ձևավորումը ենթադրում է նաև տեխնիկապես առաջավոր գործունեության տեսակների ստեղծագործական փոխառում՝ արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ, կրթության և դաստիարակության համակարգերի կազմակերպում՝ նպատակուղղված նորաստեղծական տեխնիկական գիտելիքի յուրացմանն ու կատարելագործմանը:

Զարգացման պետությունը ոչ միայն երաշխավորում է նորաստեղծական միջավայրի առկայությունը, այլև գոյացնում է արտադրական-տեխնոլոգիական շղթաներ, համակարգում է արդյունաբերական աճը, ապահովում է գիտության և ձեռնարկությունների միջև սիներգետիկ փոխգործակցությունը:

Զարգացման պետությունը վարչահրամայական կարգավորման որոշ տարրերի ժամանակակից գործադրում է, շուկայական ուժերի ավելի ազատ դրսևորումների խթանում՝ հզոր արդյունաբերական համակարգերի առաջացման դեպքում:

Ի վերջո, զարգացման պետությունը չի կարող կայանալ առանց ազգային բյուրոկրատիայի, որն ընդունում է հասարակական կյանքի նպատակադրվածությունը՝ աջակցելով դրան ստեղծագործական մրցակցության, տնտեսատեխնոլոգիական «մրցավազքի» ոգով, ինչն անհնարին է առանց հայրենասիրության արժեքային գործոնի առկայության:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ գնալով մեծանում է արդյունավետ պետության չափորոշիչների և խնդիրների սահմանման անհրաժեշտությունը: Զարգացման ունակ կլինեն միայն այն երկրները, որոնք, ըստ ազգային փորձի և համաշխարհային համակարգում զբաղեցրած դիրքի, կկարողանան ճիշտ գնահատել սեփական հնարավորությունները:

**ГАГИК ВАРДАНЯН**

## МОДЕЛЬ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ. ГОСУДАРСТВО РАЗВИТИЯ

***Ключевые слова:*** *государство развития, экономическое развитие, рыночные механизмы, экономоческий патриотизм.*

*Чисто рыночные механизмы, с некоторимы исключениями, не привели к созданию новых, быстро растущих отраслей экономики, к развитию высокотехнологичных производств, не способствовали повышению благосостояния населения. Как и во многих развивающихся странах, в Армении еще не решена проблема экономического развития. Делается вывод о том, что ключом к решению социальных, экономических и политических проблем, стоящих перед страной, является переход на модель государства развития.*

**GAGIK VARDANYAN**

## MODEL OF ECONOMIC DEVELOPMENT. DEVELOPMENTAL STATE

***Key words:*** *developmental state, economic development, market mechanisms, economic patriotism.*

*Purely market mechanisms, with some exceptions, did haven't led to the creation of new, rapidly growing sectors of the economy, to the development of high-tech industries, and havn't contributed to the welfare of the population as well. As in many developing countries, the problem of economic development has not yet been solved in Armenia. It is concluded that the key to solving social, economic and political issues facing the country is currently facing, isthe transition to a model of the developmental state.*